ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը ներառյալ Նորվեգիայի Թագավորություն (ք. Օսլո) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Աննա Պետրոսյան - ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության հարկադիր գանձման և պարտավորությունների կատարման ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Նորվեգիայի Թագավորություն, սեպտեմբերի 30-ից հոկտեմբերի 4-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպություն (IOTA)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (IOTA) կողմից կազմակերպված՝ «Հարկային պարտավորությունների նկատմամբ հսկողության իրականացումը նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ» խորագրով գործնական դասընթացին մասնակցելու արդյունքում հարկային պարտավորությունների գանձման և դրանց նկատմամբ հսկողության սահմանման նորարական ծրագրերի կիրառմամբ լուծումների ուսումնասիրության իրականացումն է:

5. Քննարկված թեմաները՝

«Հարկային պարտավորությունների նկատմամբ հսկողության իրականացումը նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ» գործնական դասընթացին քննարկվել են հետևյալ թեմաները.

- Նորարարական տեխնոլոգիական միջոցների կիրառմամբ հարկային պարտավորությունների նկատմամբ հսկողության և պարտավորությունների սեգմենտավորման մասով տվյալների արդյունահանում, գործող պրակտիկա
- Հարկային պարտավորությունների գանձման մասով հետազոտված տվյալների վերլուծություն, կառավարման գործիքների և նոր ընթացակարգերի սահմանում
- Նորարարական մեթոդների կիրառմամբ կրիպտոարժույթների հավաքագրման և դրանց նկատմամբ հսկողության կատարման ծրագրերի ներդրման նախատեսում, դրանց կիրառելիության նպատակահարմարություն

- Ակտիվներից հարկային պարտավորությունների գանձումն արդյունավետ իրականացնելու և դրանց նկատմամբ հսկողություն սահմանելու մասով կիրառվող մեխանիզմներ և գործող պրակտիկա
- Կառուցվածքային փոփոխությունների և հարկ վճարողների պատկերացումների օգտագործումը բիզնեսներ զարգացնելու համար
- Հարկ վճարողների հարկային պարտավորությունների նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացում, հարկ վճարողներին ըստ վարքագծի սեգմենտավորման հետագծելիություն սահմանելու միջոցով վերջիններիս կողմից հարկային պարտավորությունների կատարման արդյունավետության բարձրացում, ինչպես նաև հարկային մարմնի նկատմամբ վստահելիության գործիքակազմի ձևավորում
- Վերլուծական բարձր արդյունավետությամբ սարքերի ներդրումը հարկային պարտավորությունների գանձման գործընթացների թվայնացումն իրականացնելու միջոցով
- Պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցերում ռիսկերի գնահատումը և տվյալների վերլուծության օգտագործում՝ հարկային պարտավորությունների գանձումն օպտիմալացնելու նպատակով
- Հարկ վճարողների բանկային հաշիվների վրա դրված արգելանքների շրջանակներում ավտոմատ համակարգի միջոցով հարկային պարտավորությունների գանձման պարզեցված գործիքակազմի ներդրում, գործող պրակտիկա

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացին ներգրավված էին Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպության (IOTA) անդամ 33 երկրներից 56 առկա, 43 առցանց մասնակիցներ:

Դասընթացներն ընթանում էին տեսական և գործնական փուլերով: Տեղի էր ունենում նաև փորձի փոխանակում:

Մասնավորապես միջոցառման շրջանակում կազմակերպված պանելային քննարկումների և պլենար նիստերի ընթացքում Նորվեգիայի Թագավորության, Բելգիայի Թագավորության, Էստոնիայի Հանրապետության, Լիտվայի Հանրապետության, Լատվիայի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության, Իսպանիայի Թագավորության, Լեհաստանի Ժողովրդական Հանրապետության, Հունգարիայի Հանրապետության, Ֆրանսիայի Հանրապետության, Իռլանդիայի Հանրապետության, Ֆինլանդիայի Հանրապետության, Եվրոպական Հանձնաժողովի հարկային և մաքսային միության գլխավոր տնօրինության, Տնտեսական

համագործակցության և զարգացման կազմակերպության ազատ առևտրի գոտու քարտուղարության ներկայացուցիչների կողմից ներկայացվում էին կիրառվող՝ ներդրվելիք կամ արդեն իսկ գործարկվող նորագույն տեխնոլոգիաների միջոցով հարկային պարտավորությունների նկատմամբ հսկողության իրականացումը, երկրներում առկա փորձը, որից հետո նախապես բաժանված 4 խմբերով իրականացվում էին քննարկումներ՝ ինչպես խոսնակների կողմից ներկայացված, այնպես էլ նախապես բարձրացված հարցերի շրջանակներում:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Աշխատաժողովի շրջանակում կազմակերպված դեպքերի ուսումնասիրությունների և անցկացված քննարկումների արդյունքում մասնակից անդամ պետությունների ներկայացուցիչների կողմից մատուցվեցին մեծածավալ տեղեկություններ, որոնք ստացված գիտելիքների և փորձի փոխանակման արդյունքում ավելի վստահ և արդյունավետ կկիրառվեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ստացված գիտելիքները թույլ կտան ավելի արդյունավետ իրականացնել հարկային պարտավորությունների հավաքագրման գործընթացը, մշակել հարկային պարտավորությունների հավաքագրման նոր ռազմավարություն՝ ուղղված արդեն իսկ ներդրված ավտոմատացված համակարգում նոր մեխանիզմներ մշակելու, հարկային վարչարարությունն ավելի օպտիմալացնելու, ինչպես նաև հարկային վարչարարության ոլորտում արդիական և նորարական մեխանիզմներ ներդնելու կառուցակարգեր մշակելու հարցում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Աննա Պետրոսյան

09.10.2024թ